ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/72

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Հիպերնովա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ.Քոյլոյանի (լիազորագիր տրված՝ 03.08.2020թ.),

Աբովյանի համայնքապետարանի ներկայացուցիչ՝ Հ.Մկրտչյանի (լիազորագիր տրված՝ 07.08.2020թ.),

քննելով Աբովյանի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվող Հատիսի փողոցի ասֆալտապատման և եզրաքարերի փոխարինման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/31» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «Հիպերնովա» ՍՊԸ-ի կողմից 13.08.2020թ. ներկայացված (14.08.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/72 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Հիպերնովա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Հիպերնովա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 13.08.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Աբովյանի համայնքապետարանը 07.07.2020 թվականին հրապարակել է «ԱԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/31» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտարարություն (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իր կարիքների համար սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվող Հատիսի փողոցի ասֆալտապատման և եզրաքարերի փոխարինման աշխատանքների ձեռքբերման նպատակով:

Պատվիրատուի կողմից իր կարիքների համար սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվող Հատիսի փողոցի ասֆալտապատման և եզրաքարերի փոխարինման աշխատանքների ձեռքբերման վերաբերյալ գնումների պլանը հրապարակվել է 28.07.2020 թվականին:

Գնումների մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկագիրը՝ սույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է:

Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ,
ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց: (...):

Նշված իրավական նորմերի վերլուծությունից պետք է արձանագրել հետևյալը, որ գնման գործընթացի իրավական հիմքը Պատվիրատուի կողմից հաստատված և հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տեղեկագրում՝ www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլանն է, որը կարող է հիմք հանդիսանալ գնման գործընթաց սկսելու, պատասխանատու ստորաբաժանում, գնումների համակարգող և հանձնաժողով ձևավորելու համար: Այլ կերպ ասած, եթե օրենսդրական կարգի պահպանմամբ հրապարակված չէ գնումների պլանը, ապա առկա չէ իրավական հիմքը և Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ և ոչ իրավաչափ է, ուստի ենթակա է չեղարկման:

Նշվածը իր հերթին համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, Պատվիրատուն թեպետև գնումների պլանը հաստատել է 05.06.2020 թվականին, սակայն այն տեղեկագրում հրապարակել է 28.07.2020 թվականին: Այնինչ սույն գնման ընթացակարգի կազմակերպման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է մինչև գնումների պլանի հրապարակումը՝ 07.07.2020 թվականին, որը ենթադրում է, որ սույն գնման ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ոչ իրավաչափ գործողությունների, Պատվիրատուի կողմից խախտելով առկա օրենսդրական կարգը, որը իր հերթին հետագայում կհանգեցնի գործարքի անվավերության, այն օրենքի խախտմամբ կնքված լինելու հիմքով»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է չեղարկել Աբովյանի համայնքապետարանի կարիքների համար սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվող Հատիսի փողոցի ասֆալտապատման և եզրաքարերի փոխարինման

աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԱԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/31» գնման ընթացակարգը:

Այնուհետև, Ընկերությունը ներկայացված առարկությամբ հայտնել է հետևյալը.

«Գրությունը ստորագրած անձիք չունեն և չի կցվել համապատասխան լիազորությունները հավաստող փաստաթուղթ, որով պայմանավորված այն ընդհանրապես ենթակա էր վերադարձման և/կամ պետք է թողնվեր առանց քննության, այնինչ դարձել է քննության առարկա: Ի դեպ սույն գործով կողմ է հանդիսանում Պատվիրատուն և բողոքարկված է Պատվիրատուի գործողությունները:

Գնումների մասին ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի պահանջներին համապատասխան՝ բողոք ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում գնումների հետ կապված բողոքներ քննող անձը դիմում է պատվիրատուին՝ տվյալ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելու պահանջով: Սույն կետում նշված փաստաթղթերը պատվիրատուն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնում է նման պահանջ ստանալու օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նշված նորմի վերլուծությունից ակնհայտ է, որ օրենսդիրը սահմանել է հստակ ժամկետներ բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելու համար, և գտնում եմ, որ նշված ժամկետի բացթողնմամբ պայմանավորված Պատվիրատուն կորցնում է այլևս դրանց հղում կատարելու և որոշակի փաստական տվյալներ մեջ բերելու իրավունքից: Ըստ էության նման դեպքերում բողոքներ քննող անձը պետք է սահմանափակվի գործում առկա փաստաթղթերով: Ի հակառակ նշվածի Պատվիրատուին տրվեց հնարավորություն նման փաստաթղթեր ներկայացնելու համար, որը չի ստեղծում հավասար մրցակցային պայմաններ, այդ հնարավորությանը անդրադարձ կատարվեց նաև բողոքի բանավոր քննության նիստի ժամանակ և այն կապվեց վարույթ ընդունելու վերաբերյալ ենթադրյալ խախտման մասին դիրքորոշում ներկայացնելու հետ: Չնայած այն ամենին, որ գնման ընթացակարգին առնչվող փաստաթղթերը ներկայացվել են սահմանված ժամկետների խախտմամբ, միևնույն է ուղեկցող գրության մեջ, որևէ հիմնավոր փաստական և իրավական հիմք չի մատնանշվել Պատվիրատուի գործողությունների վերաբերյալ, ավելին ընդունել են այն փաստը, որ գնումների պլանը հրապարակվել է հրավերից ավելի ուշ, իսկ արդարացումները դրանք զուտ

արդարացումներ են և չեն կարող համարվել հիմնավոր: Նույն տարբերակով կարող են մասնակցի կողմից բերվել արդարացումներ այն մասին, որ պայմանագիրը հնարավոր չի եղել կատարել, քանզի տնօրենը մտածել է որ իր աշխատակիցները պետական/համայնքային կարիքի համար նախատեսված աշխատանքը կատարել են, սակայն հետագայում, երբ որոշել է ստուգել արձանագրել է, որ չեն կատարել, ուստի դա հիմք չի լինի մասնակցի/պայմանագրի կողմի նկատմամբ պայմանագրային պատասխանատվության միջոցներ կիրառելու համար: Նման մերկապարանոց մեջբերումները հարիր չեն իրավական գործընթացների համար և հանդես գալով համայնքի անունից պետք է հղում կատարել փաստական հիմքերով պայմանավորված այն իրավական հիմնավորումներին, որոնք կբացառեն որևէ իրավական նորմի կիրառում:

Անդրադառնալով սույն ընթացակարգի շրջանակում ներկայացված բողոքի վարույթ ընդունելու վերաբերյալ Պատվիրատուի դիրքորոշմանը, հայտնեմ որ այն ակնհայտ անհիմն է: Նախ այն բողոքներ քննող անձի բացարձակ իրավունքն է դրա վերաբերյալ որոշում կայացնելու համար: Երկրորդ այն հետագայում չի կարող քննարկման առարկա դառնալ, քանզի առկա չէ նման իրավակարգավորում: Ավելին նշեմ, որ Պատվիրատուի աշխատակիցների կողմից Գնումների մասին ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետի մեջբերումը ընդհանրապես կիրառելի չէ սույն գործով, քանզի այն հանդիսանում է բողոքարկման ժամկետներին վերաբերվող ընդհանուր կանոնից (Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին ենթակետ) բացառություն, պայմանավորված բողոքի առարկայով:

Այսպիսով, գտնում եմ, որ Պատվիրատուի աշխատակիցների կողմից ներկայացված գրությունը/դիրքորոշումը, ինչպես նաև նույնի վերաբերյալ Պատվիրատուի ներկայացուցչի՝ բողոքի քննության նիստի ընթացքում ներկայացված դիրքորոշումները իրավազուրկ են: Ուստի խնդրում եմ բավարարել սույն ընթացակարգի շրջանակում ներկայացված բողոքը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.08.2020թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

<u>2. Աբովյանի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Աբովյանի համայնքապետարանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 21.08.2020թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Աբովյանի քաղաքային համայնքի կողմից 2020 թվականի հուլիսի 7-ին սուբվենցիոն ծրագրի շրջանակներում հայտարարվել է «ԱԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/31» գնման ընթացակարգը, գնման առարկա է հանդիսացել Աբովյան համայնքի կարիքների համար Հատիսի պողոտայի ասֆալտապատման և եզրաքարերի փոխարինման աշխատանքների ձեռքբերումը:

Հայտերի բացման նիստը կայացել է 2020 թվականի հուլիսի 23-ին: Մրցույթին ունեցել ենք մեկ մասնակից՝ «Հիպերնովա» ՍՊԸ և «Գրիգորյան Շին» ՍՊԸ կոնսորցիումը:

Մասնակցի հայտը ներկայացվել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Կոնսորցիումը հայտարարվել է ընտրված մասնակից և համապատասխանաբար ծանուցվել է 2020 թվականի հուլիսի 30-ին պայմանագիր կնքելու որոշման մասին: Մեկ մասնակից ունենալու հիմքով պայմանավորված անգործության ժամկետ չի սահմանվել:

2020 թվականի հուլիսի 28-ին հաջորդ մրցույթը նախապատրաստելու նպատակով էլեկտրոնային տեղեկատուից ցանկացել ենք բեռնել նախորդ հրապարակած գնումների պլանը, սակայն պարզվել է, որ արդեն իսկ կայացած մրցույթը որպես գնման առարկա չկա հրապարկված էկեկտրոնային տեղեկատուի մեջ, ինչը մեր համոզմամբ եղել է տեխնիկական խնդիր՝ կապված գնումների պլանի հրապարակման պահին ինտերնետային կապի խաթարման հետ: Անմիջապես հրապարակել ենք արդեն իսկ հունիսի 5-ին հաստատված գնումների պլանը, որում ներառնված է եղել «ԱԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/31» ծածկագրով մրցույթի գնման առարկան:

2020 թվականի օգոստոսի 3-ին ստացել ենք գրություն գնումների գործընթացի հետ կապված Բողոքը քննող անձից այն մասին, որ «Հիպերնովա» ՍՊԸ և «Գրիգորյան Շին» ՍՊԸ կոնսորցիումը բողոքարկել է մրցույթի իրավական հիմք չունենալը, որն է՝ հրապարակված գնումների պլան չունենալը:

«Հիպերնովա» ՍՊԸ և «Գրիգորյան Շին» ՍՊԸ կոնսորցիումը պայմանագիր կնքելու ծանուցումը ստացել է գնումների պլանը մեր կողմից վերահրապարակելուց հետո:

Հայտնում ենք մեր դիրքորոշումն այն մասին, որ «Հիպերնովա» ՍՊԸ և «Գրիգորյան Շին» ՍՊԸ կոնսորցիումի բողոքը ընհանրապես քննության չպետք է վերցվեր:

Պավիրատուի գործողություններում չկա մասնակցին վնաս պատճառելու դիտավորություն: Մասնավորապես՝ «Հիպերնովա» ՍՊԸ և «Գրիգորյան Շին» ՍՊԸ

կոնսորցիումը մասնակցել է մրցույթին և հաղթել, ծանուցվել է պայմանագիր կնքելու համար: Պատվիրատուի կողմից չի կայացվել որևէ որոշում, որը խոչնդոտ կհանդիսանար մասնակցին:

Ինչպես հայտնի է պայմանագրի և որակավորման ապահովման բանկային երաշխիքի ձևով պահանջները բավականին նեղացրել են մասնակիցների շրջանակը և թուլացրել մրցակցային դաշտը, ինչից և տվյալ իրավիճակում ցանկանում է օգտված լինել արդեն իսկ հաղթած մասնակից «Հիպերնովա» ՍՊԸ և «Գրիգորյան Շին» ՍՊԸ կոնսորցիումը:

Ակնհայտ է, որ «Հիպերնովա» ՍՊԸ և «Գրիգորյան Շին» ՍՊԸ կոնսորցիումը որոշել է բողոքարկել և մրցույթը չեղարկելու պահանջ ներկայացնել միայն մեկ նպատակով, որպեսզի, լինելով միակ մասնակից, հնարավորություն ունենա նորից՝ ավելի բարձր գնային առաջարկ ներկայացնելու, ինչն ինքն արդեն հայտարարել է մեզ հետ քննարկումներում:

Հարկ է նշել, որ «ԱԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/31» ծածկագրով գնման ընթացակարգի ֆինանսական միջոցների 45%-ը հատկացնելու է ՀՀ կառավարությունը սուբվենցիոն ծրագրի շրջանակներում: Աբովյանի համայնքապետարանը Մրցույթի նորից հայտարարելը և ավելի բարձր պայմանագրային գնով աշխատանքների կատարելը նշանակում է համայնքային և պետական միջոցների անհարկի ծախսում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2020/72 ընթացակարգի շրջանակներում 21.08.2020թ. ժամը 11:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է ներկայացված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/72 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/72 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Աբովյանի համայնքապետարանի կարիքների համար սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվող Հատիսի փողոցի ասֆալտապատման և եզրաքարերի փոխարինման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/31» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (հետայսու նաև՝ Մրցույթ), որի

հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***07.07.2020թ.***:

2. Աբովյանի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ԱԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/31» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***28.07.2020թ.***:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Հիպերնովա» ՍՊԸ-ի կողմից 13.08.2020թ. ներկայացված բողոքը, Աբովյանի համայնքապետարանի դիրքորոշումը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները**, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում.

2) **գնման գործընթացի կազմակերպում** (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը).

3) պայմանագրի կնքում.

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ**

<u>փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,</u> իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով <u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում</u> գրավոր սահմանվում են՝**

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) **գնումները համակարգող**

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **<u>գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում</u> պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը…:

Աբովյանի համայնքապետարանի կարիքների համար սուբվենցիոն ծրագրի շրջանակներում իրականացվող Հատիսի փողոցի ասֆալտապատման և եզրաքարերի փոխարինման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԱԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/31» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել են ***<u>07.07.2020թ.</u>***:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննության շրջանակներում 14.08.2020թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/12186-2020 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել Մրցույթի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ այն հրապարակվել է ***28.07.2020թ.-ին***՝ ավելի ուշ քան, Մրցույթի հայտարարությունը և հրավերը, ընդ որում, վերոհիշյալ նորմերից բխում է, որ պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և գնումները համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից:

Այսպիսով՝ վերը նշված փաստերով պայմանավորված արձանագրում եմ, որ «ԱԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/31» ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել են գնման գործընթացի կազմակերպման «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները, ուստի գտնում եմ, որ Մրցույթը պետք է հայտարարվի չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Հիպերնովա» ՍՊԸ-ի կողմից 13.08.2020թ. ներկայացված բողոքը բավարարել.

պարտավորեցնել «ԱԲՀ-ՀԲՄԱՇՁԲ-20/31» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում Մրցույթը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**